



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-4-Ո-4
2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՋՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՇՈՏ ԱՐԱՍԻ ԱԲՈՎՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՔԸ ԼՐԱՆԱԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

նախագահությամբ՝

Ա. Մկրտումյանի

մասնակցությամբ ԱԽ անդամներ՝

*Գ. Բաղիրյանի, Ռ. Բարսեղյանի,
Գ. Խանդանյանի, Ա. Խաչատրյանի,
Մ. Հարթենյանի, Ս. Չիչոյանի,
Ե. Սողոմոնյանի, Վ. Ստեփանյանի,
Հ. Փանոսյանի*

քարտուղարությամբ՝

Շ. Վարդանյանի

2018 թվականի մարտի 2-ին քաղաք Երևանում՝ Արդարադատության խորհրդի նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավոր Աշոտ Արամի Աբովյանի լիազորությունները՝ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ, դադարեցնելու վերաբերյալ հարցը և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով, 4-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

Առաջարկել Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ 2018 թվականի մարտի 13-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավոր Աշոտ Արամի Աբովյանի լիազորությունները՝ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ